ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

20.01.2020թ. կնքված N Ե-193 բնական գազի ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպության ցածր ճնշման գազատար խողովակների և գազաօգտագործող սարքավորումների տեխնիկական սպասարկման և կարգաբերման ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» մարտի 2022թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ», մի կողմից, և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Արման Նալբանդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 20.01.2020թ. կնքված N Ե-193 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.4 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 2.1 կետում «Պայմանագրի գործողության ողջ ընթացքում մատուցված Ծառայությունների համար կազմում է» բառերը փոխարինել «մատուցված Ծառայությունների համար կազմում է տարեկան» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու /2/ հավասարազոր օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.3. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2022թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7	ք. Երևան, Ադոնցի 10
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00930884
Հ/Հ 900011054013	Հ/Հ 2470100768150010
Կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	
Գլխավոր քարտուղար՝	Գլխավոր տնօրեն՝
_____ Է. Գևորգյան	_____ Ա. Նալբանդյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԿՏ	ԿՏ